

Սայաթ Նովա

Մոտըդ նըստողը կու հարփի

Էսպես Արութինի ասած,

Մոդըդ նըստողը կու հարփի՝ դուն բանգ ու բոզա իս, ա՛զիզ:
Դիվանա Փահլուլ կու շինիս, տեսնողին՝ ազա իս, ա՛զիզ.
Ինչ տիղ կու լիս շնուք կու տաս՝ մեջլիսի մազա իս, ա՛զիզ.
Մազեն մե սահաթ լավ կու լի, դուն համան թազա իս, ա՛զիզ:

Մե խոսկըդ կանց շաքար քաղցըր, մե խոսկըդ վառ՝ քուրա-քուրա.
Մե նըմանըդ ռաշի նըման, մե նմանըդ, ջուրա-ջուրա.
Մարքարիտով լիքը կալ իս, սադափնիրըդ թուրա-թուրա.
էրծաթե կոխպեքով կոխպած, դուն օսկե ռազա իս, ա՛զիզ:

էրեսըդ առուտվան արիվ՝ քանի կէհա կու զարգա՛նա.
Թաքավոտի քարխանի զար՝ ծառը ծառեն չի՛ թարգանա.
Թե սուչ ունենամ սըպանե, թե չէ նա հախ մի՛ բարգանա.
Մե ձեռըդ ջուր, մե ձեռըդ արուն՝ ջալլաթի ջազա իս, ա՛զիզ:

Տեսնողը նաղշըդ կու տընդղե էն թավուզի բըմբուլի պես,
Ձընի տակ են նուր դուս էկած, արիվ դիբած սընբուլի պես.
Թուղ վրետ թալով պտուտ գամ, վարթի կարոտ բըլբողի պես,
Դուն ինծ շուտով մի՛ թըռցընի շավարդան-բազա իս, ա՛զիզ:

էշխեմեդ հիվանդացիլ իմ, վո՞ւնց զարար, վո՞ւնց շահ ին ասում.

Յատուկ Պոէմ

Հեքիմնիրըս ափսուսում ին՝ ծընգան տալով վա՛յ ին ասում.
Կանչողըս դարդակ է գընում «ա՛խ, Սայաթ Նովա» ին ասում.
Թաք դուն դիս գաս վիր կու կենամ, թե սազիս՝ սազա իս, ա՛զիզ: